United Nations Children's Fund
UN House 14 P Adamyan Str
Yerevan Armenia 0010

Ref: REP/ARM/2014/070
21 May 2014

To: Artur Nalbandyan
Lori Marzpet

Dear Mr. Nalbandyan

Thank you for your letter of 14 May, 2014 with the nomination of the Out-of-School Children pilot project coordination commission members.

Herewith is attached the budget of the pilot project. Please note that cell phone recharging cards and the stationery will be provided directly to the coordination commission and the case managers.

Given that the members of the coordination commission and case managers will work beyond their regular working hours and their job descriptions, working group fees will be provided in accordance with the attached budget in two equal tranches: first half payment will be processed upon the midterm report and the second half after the successful completion of all the assignments and the submission of the final report.

The amount for transportation expenses will also be provided in two tranches: the first advance payment will be done in the 1st month and the second advance in the 4th months of the project.

I am looking forward to seeing the results of Out-of-School Children pilot project which will serve as basis for scaling up the mechanism of identifying and referring out-of-school children in the country.

Thank you for you fruitful cooperation.

Henriette Ahrens
UNICEF Armenia Representative

Enclosed: Budget, ToR with the timeline

cc: Samvel Darbinyan, Mayor of Vanadzor city

30 05 14
048/5787-14

unite for children

unicef

Ոչ պաշտոնական թարգմանություն

21 մայիս, 2014

Լոռու մարզպետ՝
Արթուր Նալբանդյանին

Հարգելի պրն. Նալբանդյան

Ի պատասխան սույն թվականի մայիսի 14-ի Ձեր նամակի, որտեղ նշում եք "Հանրակրթությունից դուրս մնացող երեխաներ" փորձնական ծրագրի համակարգող խորհրդի անդամների անունները, կից ուղարկում եմ ծրագրի բյուջեն, որտեղ նշված բջջային հեռախոսակապի լիցքավորման քարտերը և գրասենյակային պարագաները կտրամադրվեն ուղղակի համակարգող խորհրդի անդամներին և դեպքի վարողներին:
Նաև, հաշվի առնելով, որ համակարգող խորհրդի անդամները և դեպքի վարողները ծրագրային միջոցառումներին կմասնակցեն իրենց աշխատանքային ժամերից հետո և աշխատանքային նկարագրից դուրս, աշխատանքային խմբի համար բյուջեյում նախատեսված վճարումը կիրականացվի 2 հավասար չափաբաժիններով՝ առաջին մասը կփոխանցվի միջնաժամկետ հաշվետվությունից հետո, և երկրորդը՝ բոլոր առաջադրանքների արդյունավետ իրականացման և վերջնական հաշվետվությունը ներկայացնելուց հետո:
Ընտանիքներ այցելելու համար դեպք վարողների ճանապարհածախսը նույնպես կտրամադրվի 2 անգամով՝ առաջին կանխավճարը ծրագրի սկզբում, և երկրորդը կանխավճարը՝ 4-րդ ամսում:
Ակնկալում եմ, որ "Հանրակրթությունից դուրս մնացող երեխաներ" փորձնական ծրագիրը կունենա դրական արդյունք, որն էլ հիմք կհանդիսանա դպրոցից դուրս մնացող երեխաների հայտնաբերման և ուղղորդման մեխանիզմների Հայաստանում հետագա ընդլայնման համար:
Շնորհակալություն համագործակցության համար:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ՝
Հենրիետ Արենս

Կից՝ բյուջե, աշխատանքի նկարագիր և ժամանակացույց:

Պատճեն՝ Սամվել Դարբինյան, Վանաձորի քաղաքապետ

# “Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ” փորձնական ծրագրի մասնակից դեպքի վարողի Աշխատանքի նկարագիր

## 1. Ներածություն

Ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2012» զեկույցի, 2011-12 թթ. տարրական, հիմնական և ավագ դպրոցներում աշակերտների ընդգրկվածությունը եղել է համապատասխանաբար 99%, 92% և 73%: Ըստ կրթության և գիտության նախարարության հաշվարկների, հիմնական դպրոցի հաճախելիության 92% ցուցանիշը մասամբ պայմանավորված է միգրացիայով (այլ կերպ ասած, պատճառը ոչ թե այն է, որ այդ երեխաները դպրոց չեն գնում, այլ նրանք պարզապես Հայաստանում չեն): Սակայն, վերը նշվածի պատճառով հստակ հայտնի չէ թե բացակայությունները ինչ տոկոս են կազմում:

Մի շարք հետազոտություններ մատնանշում են, որ դպրոցից դուրս մնալու հիմնական որոշիչ պատճառներն են հաշմանդամությունը, ընտանիքի սոցիալական խնդիրները, և, որոշ դեպքերում, պատկանելիությունը ազգային փոքրամասնություններին: «Խոսքը ներառման մասին է» ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետազոտությունը ցույց տվեց, որ հաշմանդամություն ունեցող երեխաների 18%-ը չեն գնում դպրոց: Այդ համամասնությունը կարող է հասնել գյուղական համայնքների, ինչպես նաև մտավոր և հենաշարժողական հաշմանդամություն ունեցող երեխաների մեկ քառորդին[1]:

Ներկայումս չեն գործում այնպիսի արդյունավետ մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր է բացահայտել դպրոցից դուրս մնացող երեխաներին և նրանց վերադարձնել դպրոց: Հանրակրթությունից դուրս մնալու կամ դպրոց չհաճախելու պատճառները հաճախ բազմաբնույթ են և դպրոցը միայնակ չի կարողանում պայքարել դրանց դեմ: Այսպիսով, անհրաժեշտություն կա ստեղծել համագործակցության մեխանիզմ՝ առողջապահության, կրթության և սոցիալական պաշտպանության համակարգերի, ինչպես նաև համայնքների և հասարակական կազմակերպությունների միջև:

Նախատեսվում է Վանաձորի տարածաշրջանում 2014 թ մայիս-դեկտեմբեր ամիսներին փորձարկել դպրոցից դուրս մնացող երեխաների մոնիտորինգի մեխանիզմ: Համակարգը ի հայտ կբերի դպրոցից դուրս մնացած երեխաներին և տարբեր ծառայությունների համագործակցության միջոցով նրանց կօգնի վերադառնալ հանրակրթություն:

Այս նպատակով Վանաձորում կստեղծվի համակարգող խորհուրդ, կազմված երեխայի պաշտպանության, սոցիալական պաշտպանության, առողջապահության, կրթության ոլորտների և համայնքների ու ոստիկանության ներկայացուցիչներից:

## 2. Նպատակը

Փորձնական ծրագրի մասնակից դեպքի վարողների նպատակն է վարել դպրոցից դուրս մնացած կամ դուրս մնալու վտանգին ենթակա երեխաների գործերը Վանաձորի տարածաշրջանում իրականացվող փորձնական ծրագրի շրջանակներում:

**3. Ժամանակահատվածը՝** մայիս - դեկտեմբեր, 2014 թ.

**4. Ծրագրի ղեկավար՝** Մերի Պողոսյան, ՅՈՒՆԻՍԵՖ-ի կրթական ծրագրերի ղեկավար, հաշմանդամության հարցերով պատասխանատու

**5. Ծրագրի ղեկավար աջակցությունը՝** Արդյունքների և հաշվետվությունների վերանայում, տեխնիկական խորհրդատվություն

## 6. Առաջադրանքի նկարագրություն

| Առաջադրանքներ | Վերջնական արդյունք | Ժամանակացույց |
| --- | --- | --- |
| 1. Վարել դպրոցից դուրս մնացած կամ դուրս մնալու վտանգին ենթակա երեխաների դեպքերը՝ կիրառելով դեպքի վարման հաստատված մեթոդաբանությունը | Դեպքի գնահատման և զարգացման ծրագրեր | մայիս – դեկտեմբեր 2014 |
| 2. Ներկայացնել հաշվետվություն համակարգող խմբին | Դեպքերի ամսական հաշվետվություններ | մայիս - դեկտեմբեր 2014 |

[1] Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունների մատչելիությունը Հայաստանում, ՅՈՒՆԻՍԵՖ, 2012, Երևան

7. Որակավորում

- Փորձառություն սոցիալական ծառայությունների ոլորտում
- Դեպքի վարման մեթոդաբանության վերապատրաստում

8. Աշխատանքի թերացման դեպքում հնարավոր տույժ

ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակը իրավունք է վերապահում չվճարել ամբողջ կամ պայմանավորված գումարի մի մասը, եթե այս փաստաթղթում սահմանված առաջադրանքները կամ դրանց մի մասը չկատարվեն կամ կատարվեն նշված ժամկետից ուշ:

# Բյուջե

## “Հանրակրթությունից դուրս մնացող երեխաներ” փորձնական ծրագիր

*ժամանակահատված՝ մայիս-դեկտեմբեր, 2014*

| | | միավոր | միավոր արժե | միավորների քանակություն | ընդհանուր գումար ՀՀԴ |
|---|---|---|---|---|---|
| 1 | *Համակարգող խորհուրդ, 6 անձ* | անձ-օր | 20000 | 192 | **3840000** |
| 2 | *Դեպքի վարողներ, 6 անձ* | անձ-օր | 10000 | 192 | **1920000** |
| 3 | *Ընտանիքներ այցելելու համար դեպք վարողների ճանապարհածախսը* | այցելություն | 1000 | 900 | **900000** |
| 4 | *Դեպքի վարողների համար բջջային հեռախոսակապի լիցքավորման քարտեր* | րոպե | 30 | 12000 | **360000** |
| 5 | *Համակարգող թիմի համար բջջային հեռախոսակապի լիցքավորման քարտեր* | րոպե | 30 | 7200 | **216000** |
| 6 | *Գրասենյակային պարագաներ (ներառյալ քարթրիջ) /տպագրություն* | փաթեթ | 200000 | 1 | **200000** |
| | Ընդհանուր | | | | **7436000** |